



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

<< ----->> << ----->> 2021թ.

N -----

**<<Ետաքննող լրագրողներ>> ՀԿ-ի
<<Ետք>> թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանին**

Հարգելի պարոն Բալասանյան,

Ի պատասխան Ձեր՝ 2021 թվականի սեպտեմբերի 22-ի հարցմանը, տեղեկացվում է, որ ՀՀ Արմավիրի մարզի Դոդս, Նորապատ, Ամբերդ, Մայիսյան և Նորակերտ համայնքների ղեկավարների լիազորությունները, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջի՝ հրաժարական տալու, իսկ Եղեգնուտ համայնքի ղեկավարի լիազորությունները՝ նույն հոդվածի նույն մասի 7-րդ կետի պահանջի՝ վեց ամիս անընդմեջ համայնքի ավագանու նիստ չհրավիրելու հիմքերով են վաղաժամկետ դադարեցվել:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ՀՀ Արմավիրի մարզի Եղեգնուտ համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել է համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի N36-Ա որոշմամբ, որը, լիազորությունները վաղաժամկետ դադարեցված Ռ. Մարգարյանի կողմից, բողոքարկվել է ՀՀ վարչական դատարան և նշված՝ ՎԴ/1646/05/21 վարչական գործով դատարանի 2021 թվականի հուլիսի 1-ի որոշմամբ նոյեմբերի 3-ին ժամը 11:00-ին ՀՀ վարչական դատարանում նախնական դատական նիստ է նշանակվել:


Դոդս համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել է համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 28-ին կայացած նիստի արձանագրությամբ, Նորապատը՝ համայնքի ավագանու 2021 թվականի հունիսի 30-ին կայացած նիստի արձանագրությամբ, Ամբերդը՝ համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 12-ին կայացած նիստի արձանագրությամբ, Մայիսյանը՝ համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 17-ին կայացած նիստի արձանագրությամբ, իսկ Նորակերտը՝ համայնքի ավագանու 2021 թվականի օգոստոսի 16-ին կայացած նիստի արձանագրությամբ:

Տեղեկացվում է նաև, որ ՀՀ Արմավիրի մարզպետի համապատասխան որոշումներով նշված համայնքներում նշանակվել են համայնքների ղեկավարների պաշտոնակատարներ: ՀՀ-ում վարչատարածքային բարեփոխումների շրջանակներում, ՀՀ Արմավիրի մարզում մեկնարկել է համայնքային փնջերի տեսքով համայնքների խոշորացման ծրագիրը, որի ավարտից հետո, <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք>> սահմանադրական օրենքի 120-րդ հոդվածի 2.2-րդ մասի համաձայն, մարզպետի համապատասխան որոշմամբ, մարզում կնշանակվի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններ՝ հաշվի առնելով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից 2021 թվականի համար սահմանված տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրերը:

Հարգանքով՝

Ա. Հովհաննիսյան

25.09.2021



VERIFIED OCSP 25.09.2021 16:10:23 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Կարգ.՝ Գ. Հովհաննիսյան
Լ. Հարությունյան

Հեռ.՝ 023727649

